

**ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ  
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

(Հովհաննիսյան Ս., Աննալների դպրոցը և պատմության գրության կերպերը, Եր., «Սարգիս Խաչենց • Փրինթինֆո», 2022, 312 էջ)\*

**Բանալի բառեր** – պատմություն, պատմագրություն, ձգնաժամ, Աննալների դպրոց, մտայնություն, մեթոդաբանություն, հիշողություն, միջգիտակարգայնություն:

Հայոց պատմությունն էական, առանցքային բաղադրիչ ու դիտանկյուն է եղել հայկական մշակույթը հասկանալու և հայկական ինքնությունն ըմբռնելու համար: Սակայն հատկապես 20-րդ դարասկզբից սկսած և առանձնապես խորհրդայնացումից հետո շարադրված հայոց պատմությունը քննադատական սուր հայացքի նշանառության տակ է հայտնվում, քանի որ ի գործ է չի լինում ներկայացնելու կամ վերկայացնելու հայկականության խորքերը:

Հովհ. Թումանյանը բավականին խիստ էր գնահատում հայոց պատմության վիճակը. «... Հայ ժողովուրդը չունի և չգիտե իր պատմությունը, նույնիսկ երեկ մեկել օրվա պատմությունը. չգիտի թե ո՞վ է ինքը, ո՞րտեղից է գալիս և ո՞ր է գնում»<sup>1</sup>: Պատմությունը մեզանում այսօր կա որպես այդպիսին, որպես ճակատագիր, ինքնության հիմք, բայց չկա այն արտահայտելու ո՛չ լեզուն, ո՛չ էլ կամքը: Մյուս կողմից, սակայն, եթե չկա պատմության գրությունը, ուրեմն խնդրարկելի է պատմությունն ընդհանրապես: Անշուշտ, եղել են ու կան գրություններ, որ ներկայանում են իբրև հայոց պատմություն, բայց դրանք կա՛մ

Վէմ համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 1 (81), հունվար-մարտ, 2023

\* Ընդունվել է տպագրության 26.03.2023:  
1 Թումանյան Հ., Հայոց պատմություն, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 6, Եր., 1994, էջ 355:

պատմական դրվագներ են, կա՛մ էլ իրադարձությունների նկարագրություններ ու բացատրություններ: **Հայոց պատմության՝ իբրև ամբողջականության, իմաստակիր իրողության, քաղաքակրթական չափումի հատույթն է բացակայում, որը չի կարող լրացվել իրադարձությունների ժամանակագրությամբ ու նաև պատճառահետևանքային շարադրմամբ:** Վերջիններս բազմաթիվ են, բայց ինչպես Կոստան Զարյանն էր ասում, «Պատմութեան մէջ կարեւորը այն է, ինչ որ պատմութիւն չէ, այլ ներքին, էական, հոգեկան այն յարակցութիւնը, լռութիւնների այն անդունդը, որի մէջ նետուած քարը արձագանքում է»<sup>2</sup>: Ուրեմն լեզու է հարկավոր՝ խոսեցնելու այն, ինչն իրադարձությունների պարզ ընթացք չէ պատմության հոլովույթում: Այդ փորձերը մեր իրականության մեջ խիստ սակավ են:

2022 թվականին լույս տեսավ Սմբատ Հովհաննիսյանի «Աննալների դպրոցը և պատմության գրության կերպերը» մենագրությունը, որը կարելի է հայկական միջավայրում պատմության նոր մեթոդաբանությունների փորձընկալման իրողություն համարել: Աշխատությունը նվիրված է արևմտյան պատմագիտության մեջ բեկումնային դեր ունեցած ֆրանսիական Աննալների դպրոցի պատմությանն ու տրամաբանությանը: Գիրքը համակողմանի ներկայացուցականություն ունի, քանի որ խնդրո առարկային մոտեցել է թե՛ ժամանակագրական և թե՛ թեմատիկ դիտանկյուններից, ինչը թույլ է տալիս ներսից հասկանալ պատմության տեսության շրջանակներում ձևավորված այդ մեթոդաբանությունը: Վերլուծված է ահռելի գրականություն՝ շուրջ 500 անուն աղբյուր, որոնք սերտորեն միահյուսված են մանրամասն ու հետևողական հետազոտության մեջ: Քննադատական վերլուծությունից բացի՝ կատարված է թարգմանական ու հայկականացման աշխատանք, ընդ որում՝ խոսքը ոչ միայն առանձին եզրույթների, այլև ընդհանրապես նյութը հայերեն մտածելու մասին է: **Հայ հումանիտար մտքի ծիրում Աննալների դպրոցի տեղակայումը և՛ մարտահրավեր է, և՛ հնարավորություն. մարտահրավեր, քանի որ այն պատմագրման սեփական կաղապարներից դուրս գալու հայտ է, անցյալում մնալը դատապարտելու հիմք, և հնարավորություն, քանի որ հայոց պատմությունը լճացումից դուրս բերելու և նորովի մտածելու հորիզոն է:**

---

2 Զարեան Կ., Անցորդը եւ իր ճամբան, Եր., «Սարգիս Խաչենց • Փրինթինֆո», 2010, էջ 274:

Ս. Հովհաննիսյանը, հղելով Հոյսիի, Թրյուչի և այլոց աշխատությունները, մեկնարկում է պատմության ձգնաժամի արձանագրումից ու ներկայացումից՝ ըստ էության առաջադրելով այն գաղափարը, որ պատմագիտությունն ամեն անգամ կհայտնվի ձգնաժամում, եթե չվերանայի իր մեթոդաբանական հիմքերը<sup>3</sup>: Պատմագիտական ձգնաժամը նշանակում է, որ պատմական շարադրանքները կրկնում են մեկը մյուսին և չեն բավարարում առկա ճանաչողական հայցերը: 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի պատմագիտական ձգնաժամի գլխավոր պատճառն այն էր, որ հետազոտության փաստական հիմքը նույն ու սահմանափակ արխիվային նյութերն էին, իսկ դրանց հիման վրա կառուցված շարադրանքները բաց էին թողնում իրադարձությունները պայմանավորող միջավայրի ներկայացումը: Այդպիսին էր դրապատմական (պոզիտիվիստական) պատմագրությունը, որի հաղթահարմանն էին միտված նարատիվիստական (պատումային) պատմատեսությունը, Ֆուկոյի հնագիտական մեթոդաբանությունը և այլ շարժումներ: Դրանցից ժամանակագրորեն ավելի առաջ է Աննալների պատմագիտական հայեցակարգը, որի ծնունդը կարելի է համարել 1929 թվականը, երբ հրատարակվեց Աննալների հանդեսի («Տարագրություններ տնտեսական և սոցիալական պատմության») առաջին համարը:

Ս. Հովհաննիսյանն անդրադառնում է իր գրքի վերնագրի մի հատվածին և քննարկում «Աննալների դպրոց» եզրույթի վավերականությունը: Աննալականներից շատերը մերժել են այդ արտահայտությունը՝ հանդես գալով «խմբային ոգու» դեմ և առաջարկելով «շարժում», «հարացույց» և այլ տարբերակներ, բայց քանի որ Ս. Հովհաննիսյանը ցույց է տվել սերունդների միջև ընդհանրություններն ու կապը և նրանց անցումների տրամաբանությունը, ուստի նախընտրել է «դպրոց» եզրույթը՝ այն կիրառելով հարացուցային իմաստով<sup>4</sup>: Աննալների մտածողության «Ելակետն այն էր, որ պատմագիտական խնդիր-

3 Տե՛ս **Հովհաննիսյան Ս.**, Աննալների դպրոցը և պատմության գրության կերպերը, Եր., «Սարգիս Խաչենց • Փրինթինգո», 2022, էջ 23-24, 205:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 3-5: Ի դեպ, հետաքրքիր ձևով սա հիշեցնում է գրեթե նույն թվականներին ֆրանսահայ սկյուրքի ձևավորման մեջ հիմնարար նշանակություն ունեցած «Մենք» հանդեսի հանգանակը, որի հեղինակները հատուկ ընդգծում էին միասնության մեջ իրենց անհատականության կարևորությունը. «Մեր համերաշխութեամբն ու համագործակցութեամբն իսկ, որ երբեք չպիտի խափանէ իւրաքանչիւրիս անհատականութեան ազատ ու լրիւ զարգացումը, շաղախ հանդիսանալ չորս արիւրով ցրուած երիտասարդ գրողներու միջեւ ու այդպիսով դիւրացնել հայ նորագոյն գրականութեան ազատ զարգացումն ու ծաղկումը» («Մենք», Փարիզ, 1931, N Ա, էջ 3):

ներն այլևս անհնար է լուծել մեկուսի»<sup>5</sup>, ուստի հարկավոր է գտնել բոլոր գիտակարգերը միավորող առանցքը, որպեսզի հնարավոր լինի համակարգայնորեն մոտենալ պատմական իրականությանը: Սա նշանակում է, որ փոխվում էր ընդհանրապես պատմությանը մոտենալու կերպը, ինչը, ըստ Ս. Հովհաննիսյանի, խտացված է այն դիրքորոշման մեջ, որ հարկավոր է պատմություն-պատումի փոխարեն պատմագիտական հետազոտության առարկա կարգել պատմություն-խնդիրը, այսինքն՝ բացատրական-մեկնաբանական առաջադրանքը<sup>6</sup>:

Պատմության առարկան պարզ ու անմեկին կերպով տրված չէ, այլ ենթակա է որոնման: Նախկին պատմագիտության առանցքային ելակետերից մեկն այն էր, որ մարդը նույնն է բոլոր ժամանակներում, հետևաբար անցյալն ու ներկան առանձնապես չեն տարբերվում միմյանցից, և դրանց միջև հաղորդակցում ապահովելու խնդիր չկա: Այդօրինակ մտայնության հետևանքով ստեղծվել է սխեմատիկ ու «օբյեկտիվիստական հակումներով» շեշտադրված պատմագրություն: **Աննալների դպրոցում ընդգծվում են մարդկային մտայնությունը, դրա սուբյեկտիվ կողմը, և խնդիր է առաջադրվում ներկայացնելու պատմության, այսպես ասած, ներքին կողմը, որն էականորեն կախված է մարդուց, ինչը ենթադրում է պատմագիտության և մարդաբանության սերտ համագործակցություն:**

Այս ընդհանուր գաղափարի պատմականացման շուրջ է կառուցված Ս. Հովհաննիսյանի աշխատությունը, որում ցույց է տրված ամեն սերնդի ներդրումը պատմագիտության մեջ: Աննալների դպրոցի հիմնադիր համարվում են Մարկ Բլոկն ու Լյուսիեն Ֆևրը, որոնց հայացքների վերլուծությանն է նվիրված գրքի առաջին գլուխը: Ի դեպ, դեռ 2018 թվականին Ս. Հովհաննիսյանի ծավալուն առաջաբանով ու մանրամասն ծանոթագրություններով լույս է տեսել Մարկ Բլոկի «Պատմության պաշտպանական, կամ պատմաբանի արհեստը» կոթողային աշխատության հայերեն թարգմանությունը («Մարգիս Խաչենց • Փրինթինֆո» հրատարակչությունների ծրագրում կա նաև աննալական ժակ լը Գոֆֆի «Միջնադարյան Արևմուտքի քաղաքակրթություն» երկի հայերեն հրատարակությունը): Բլոկի աշխատությունը սկսվում է մի պարզ հարցից, որին պատասխանելուն էլ, ըստ էության, միտված է

5 Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 8:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 52-53:

Աննալների դպրոցի պատմատեսության մտավոր ջանքը. «...ինչի՞ է պետք պատմությունը»<sup>7</sup>: Այս հարցի պատասխանը, անդրադառնալով հետազոտությունների առարկային, մեթոդներին և նպատակին, ամփոփում է պատմագիտական հայեցակարգերի ողջ փիլիսոփայությունը: Հենց իբրև այս հարցի պատասխան է ձևավորվել պատմության առարկայի վերաբերյալ Մ. Բլոկի և ընդհանրապես Աննալների դպրոցի վերանայված մոտեցումը:

Ավանդական պատկերացումների համաձայն՝ պատմությունը գիտություն է անցյալի, ավելի ձգգրիտ՝ անցյալի իրադարձությունների մասին: Բայց այս դիրքորոշման շուրջ հենց առաջին արձագանքն այն է, թե ինչի է պետք անցյալի մասին գիտելիքը, եթե չի կապվելու ներկայի հետ: Մ. Բլոկը նույնիսկ սխալ ու անհեթեթ է համարում այդ արտահայտությունը՝ հռետորական ձևով պնդելով, թե «Ինչպե՞ս կարելի է առանց նախնական զտման ռացիոնալ ճանաչողության նյութ դարձնել երևույթներ, որոնց միակ ընդհանուր հատկանիշը ժամանակակից չլինելն է»<sup>8</sup>: Նմանօրինակ հարց-պնդումը հոգեհարազատ է նաև նարատիվիստական ուղղության ներկայացուցիչներին: Նույնն էր ասում նաև Հայդըն Ուայթը, երբ տարօրինակ էր համարում, որ կան անցյալն ուսումնասիրող մասնագետներ, և հարց էր բարձրացնում, թե «Ինչո՞ւ պիտի պետությունը, հասարակությունը կամ համայնքը վճարի մարդկանց անցյալն ուսումնասիրելու համար»<sup>9</sup>:

Մ. Հովհաննիսյանի գրքում չկա Աննալների դպրոցի համեմատական վերլուծություն այլ ուղղությունների հետ, բայց ուշագրավ նմանություններ ու տարբերություններ կարող են բացահայտվել հենց նարատիվիզմի առնչությամբ, որը ևս հրատապ էր համարում պատմագիտական ձգնաժամի հաղթահարումը, բայց չէր ընդունում դրան հասնելու աննալական լուծումը՝ համարելով, որ պատմության սոցիալական, տնտեսական և այլ խորքերի վերհանումը մի օր կավարտվի, և դարձյալ ձգնաժամ առաջ կգա:

Մ. Հովհաննիսյանը ներսից է ներկայացնում Աննալների պատմատեսությունը, դպրոցը բացատրում ինքն իրենով: Անդրադառնալով անցյալի և ներկայի փոխհարաբերության հարցին՝ նա հիմնական

7 Բլոկ Մ., Պատմության պաշտպանական, կամ պատմաբանի արհեստը, թարգմ.՝ Շուշան Սակարյան, Եր., «Սարգիս Խաչենց • Փրինթինֆո • Անտարես», 2018, էջ 47:

8 Նույն տեղում, էջ 66:

9 Դոմանսկա Ե., Հարցազրույց Հեյդըն Ուայթի հետ, թարգմ.՝ Դ. Սոսիյանի, «ԿԱՄ», Եր., 2021, N 9, էջ 171:

մտահոգությունը համարում է անցյալն արդիության տակ ճզմելու վտանգը և այդ առթիվ Բլոկի աշխատությունից մեջբերում մի հատված. «Ներկան չհասկանալը անցյալի չինացության անխուսափելի հետևանք է: Բայց թերևս նույնքան էլ ապարդյուն է անցյալը հասկանալու ամեն ջանք, եթե ներկայի մասին ոչինչ չգիտես»<sup>10</sup> (այս մեջբերման կարևորությունը վկայում է գրքում երկու անգամ հանդիպելը): Քաղաքական պատմությանը հակադրվող ամբողջական պատմության գաղափարը և անցյալը ներկային անխախտ ձևով կապող սկզբունքն է առաջադրվում Բլոկի ու Ֆերի աշխատություններում, որը զարգացվում է երկրորդ սերնդի, մասնավորապես՝ Ֆեռնան Բրոդելի տեսության մեջ և վերածվում **համընդգրկուն պատմության** հայեցակարգի: Այս հայեցակարգը Աննալների դպրոցի հետ զուգորդվող թերևս ամենահայտնի գաղափարն է և նշանավորում է մարդու մասին գիտակարգերի սերտաձում և դրա դիրքերից պատմության դիտարկում: Համընդգրկունությունը բնավ չի նշանակում գրել աշխարհի ամբողջական ու համապարփակ պատմությունը, այլ ենթադրում է սոցիալական ու մշակութային ցանցերի ստեղծում և միջգիտակարգային մոտեցում, որը հնարավորություն կտա վեր կանգնելու եզակի ու պարզ ընթացք խորհրդանշող սոցիալական ժամանակի պատկերացումից և պատմական ժամանակն ըմբռնելու որպես տարբեր արագացումներ ու դանդաղումներ ունեցող ժամանակ<sup>11</sup>:

Պատմական ժամանակի բրոդելյան հայեցակարգը հիմնված է երեք հիմնական չափումների վրա՝ կարճ տևողություն կամ քաղաքական ժամանակ, միջին տևողություն կամ տնտեսական ժամանակ և երկար տևողություն կամ քաղաքակրթական ժամանակ: Սրանք իրենց հերթին ենթադրում են տարբեր ենթաժամանակներ, բայց այդ հիմնական կառույցն արդեն իսկ վկայում է ձևավորվող նոր պատմագիտության մասին: Կարճ տևողությունն իրադարձային պատմության թաղանթն է, որը չափվում է տասնամյակներով: Այս հարթությունում է հիմնականում գրվել ոչ միայն հայոց, այլև ընդհանրապես մյուս երկրների պատմությունը: Միջին տևողությունը վերաբերում է տնտեսական ու ժողովրդագրական իրողություններին և նկատելի է հարյուրամյակների կտրվածքով: Աննալների դպրոցի առաջին սե-

10 Բլոկ Ս., նշվ. աշխ., էջ 89: Տե՛ս նաև Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 56:

11 Տե՛ս Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 89, 99:

րունդն այս կողմի վրա է հատկապես ուշադրություն դարձրել՝ առաջնայնությունը տալով տնտեսական ու սոցիալական պատմություններին: Պատմությունը չի դառնում հանրային կենսագործունեության բաղկացուցիչն ու ուղեցույցը, որովհետև իբրև սխեմատիկ կառույց է մնում և չի առնչվում մարդու համար ամենահարազատ ոլորտներին՝ հոգևոր տիրույթին, արտադրական հարաբերություններին կամ առօրյա կյանքին: Աննալական պատմատեսությունը խնդիր է դնում առաջին հերթին լրացնելու այդ բացը: Պատմություն է ներառվում առտնին կյանքը: Ս. Հովհաննիսյանն ընդգծում է, որ **առտնին կյանքը** պետք է տարբերակել առօրյա կյանքից: Առաջինը եզրույթ է, որը նշանակում է կեցության այն կողմը, որտեղ մարդիկ ներգրավված են, որպես կանոն, առանց գիտակցելու, բայց այդտեղ առկա մանր իրողությունները որոշարկում են հասարակական կյանքը<sup>12</sup>: Այս համատեքստում են գրվել Միշել դը Սերտոյի, Ալեն Կորբենի, Ալֆ Լյուդկեի և այլոց աշխատությունները<sup>13</sup>, և կազմավորվել առտնին պատմությունն իբրև առանձին տիրույթ:

Բրողելը, հաշվի առնելով այդ հատույթը, առավելապես կենտրոնանում է երկար տևողության վրա, որը, կարելի է ասել, **անգիտակցական պատմության** խորհրդանիշն է և աչքի չի ընկնում հարահուսն ընթացքներով, այլ ավելի շուտ անշարժ է: Ս. Հովհաննիսյանի ձևակերպմամբ՝ «Պատմության այս չափումը միտում ունի միավորելու ողջ մարդկությունը, ի մի բերելու նրա ծավալումը ժամանակի և տարածության մեջ»<sup>14</sup>: Երկար տևողությամբ համընդգրկուն պատմությունը վերաբերում է քաղաքակրթությանը: Բրողելը, չբավարարվելով Շպենգլերի և Թոյնբիի պատկերացումներով, մշակում է քաղաքակրթության իր հայեցակարգը, որում հատուկ կարգավիճակ են ստանում մտայնությունները, աշխարհագրական տարածքները, հասարակական ու տնտեսական կառույցները և այլն (այդ փոփոխությունն ուղղակիորեն արտացոլվում է հանդեսի խորագրում՝ «Տարեգրություններ. տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ»): Որպես արդյունք՝ «քաղաքակրթություն» հասկացությունը չա-

12 Տե՛ս նույն տեղում, էջ 128-129:

13 Տե՛ս De Certeau M., The Practice of Everyday Life. Translated by S. Rendall, University of California Press, 1988, Corbin A., A History of Silence: From the Renaissance to the Present Day. Translated by J. Birrell, "Polity Books", 2018, Lüdtke A., Des ouvriers dans l'Allemagne du XXe siècle. Le quotidien des dictatures, Paris, 2000:

14 Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 107:

փազանց ծանրաբեռնվում ու բարդանում է, և դժվարություն է առաջանում համընդգրկուն և առտնին պատմությունների փոխհարաբերության որոշարկման հարցում: Աննալների դպրոցի երրորդ սերունդը, որի մշակած հայեցակարգը ստանում է «Նոր պատմագիտություն» անվանումը, հաղթահարում է հենց այդ խնդիրը, որի ընթացքում վճռականորեն հրաժարվում է **համընդգրկուն պատմության** գաղափարից: Նախորդ շրջանի նկատմամբ քննադատական վերաբերմունքն ուղեկցվում է նոր մեթոդաբանությամբ, որի էությունը պատմության քանակական և շարային ըմբռնումն է կամ այլ կերպ՝ ապամարդացումը<sup>15</sup>: Այս շրջանի աննալականները համընդգրկունությունը պատրանք էին համարում և փորձում էին հաշվարկների միջոցով պատմության մեջ վեր հանել հաջորդական շարքեր, վիճակագրական տվյալներ ու պատմաբանի գործունեությունը մոտեցնել ծրագրավորողի աշխատանքին: Պատմությունից մարդու հեռացման այդ միտումը հետաքրքիր արձագանք է Ֆուկոյի հնագիտական մեթոդաբանությանը: Գրքում չկան նման կապերի բացահայտումներ ու վերլուծություններ, բայց թերևս արժեք անդրադառնալ Ֆուկոյին, մանավանդ որ հիշատակվում է, օրինակ, նրա ազդեցությունն էականորեն կրող Պոլ Վեյնի անունը: Ֆուկոյի ստվերային ներկայությունը զգալի է արդեն իսկ Բրոդելի հայեցակարգում, որում անընդհատության կողքին կարևորվում է ընդհատության հղացքը՝ որպես պատմական գործընթացի անկապտելի չափում<sup>16</sup>: Նոր պատմության ամենակարևոր գծերից մեկն ընդհատության գաղափարի ներմուծումն էր համարում նաև Ֆուկոն, որի կարծիքով՝ դա թույլ կտա առանձնացնել նոր բնագավառներ, որ նկատելի չեն անընդհատության նախադրյալի պարագայում<sup>17</sup>: Նույն իրավիճակն է նաև «Մտայնությունների պատմության» դեպքում. աննալականները խնդիր էին դրել պատմագիտական հետազոտությամբ վեր հանելու մտայնություններ, որոնք փոփոխվում են դանդաղ ու աննկատ, բայց վճռական դեր ունեն ժամանակի ոգու կայացման գործում: Այսինքն՝ պատմության առարկան դառնում է ոչ թե մարդը, այլ առանց որոշակի սուբյեկտի մտայնությունը, որն էլ պայմանավորում է մարդու մասին պատկերացումները: Նույնը չէ՞ր պնդում նաև Ֆուկոն:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 17, 144-150:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 118:

17 Տե՛ս **Ֆուկո Մ.**, Գիտելիքի հնագիտությունը, թարգմ.՝ Ն. Կարոյան, Եր., «Զանգակ», 2022, էջ 36-37:

Ս. Հովհաննիսյանը, համարելով, որ շարային ու քանակական մեթոդաբանությունը և մտայնությունների պատմությունը երկդիմի կերպով են ընդունվել գիտական աշխարհում<sup>18</sup>, անդրադառնում է դրանց հետագա դրսևորմանը, որը եղավ պատմական մարդաբանությունը, որը հնարավորինս ընդարձակում է պատմական տարածքը՝ առավել կարևորելով մարդուն վերաբերող իրողությունների ընդգրկումն ու միջգիտակարգային մոտեցումը:

Գրախոսվող գրքում առանձնակի նշանակություն ունի պատմության և հիշողության փոխհարաբերության հարցի քննարկումը: Ս. Հովհաննիսյանի հեղինակությամբ 2014 թվականին լույս տեսավ Պիեռ Նորային անդրադարձող «Պատմություն և հիշողություն» երկվեզու աշխատությունը: Այդ նյութն ուղղակիորեն վերաբերում էր հայ իրականությանը, որովհետև դրանում դրվում էր ցեղասպանությունների աստիճանակարգման խնդիր, և հետևաբար անցյալը քաղաքականացնելու և նվաճելու նպատակ կար: Հիշողության հետազոտության մեթոդաբանությանը չտիրապետելը կարող է վտանգել սեփական պատմությունը կայացնելու աշխատանքը:

Աննալների պատմատեսությունը մեթոդաբանական գինանոց է տրամադրում հավաքական հիշողությանն առնչվող հարցերը վերլուծելու համար: Սա է նաև այն պնդման հիմքը, որ Աննալների դպրոցը միայն ֆրանսիական իրականությանը չի վերաբերում, այլ վերտեղային բնույթ ունի, հետևաբար չորրորդ ու հաջորդ սերունդների հետքերը չպետք է լոկ ֆրանսիայում փնտրել<sup>19</sup>: Այս տեսության ու մեթոդաբանության ներբերումը հայոց պատմատեսության միջավայր կհարստացնի ու կխորացնի ոչ միայն պատմագիտական գիտելիքի դաշտը, այլև ընդհանրապես հումանիտար ոլորտը: Գրքի նախաբանում խոսվում է հայագիտության մեջ դրա կարևորության մասին, բայց բուն տեքստում չկան անդրադարձներ կամ հղումներ հայոց պատմությանը: Թերևս դա հետագա աշխատանքի նյութ է:

**Դավիթ Ռ. Մոսինյան**  
Փիլ. գիյր. թեկնասծու

18 Տե՛ս Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 190:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 261:

**Դավիթ Ռ. Մոսինյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է պատմության փիլիսոփայությունը, մշակութաբանությունը, գիտության մեթոդաբանությունը և կինոյի տեսությունը:

Էլ. հասցե՝ drmosinyan@bryusov.am

Summary

### **Historiographical Concept of the Annales School**

(Hovhannisyan S. , The Annales School and the Ways of Writing History, Yerevan, "Sargis Khachents • Printinfo, 2022, 312 pp.)

Davit R. Mosinyan

*Candidate of Sciences in Philosophy*

**Key words** – history, historiography, crisis, Annales School, mentality, methodology, memory, interdisciplinarity.

The monograph titled "The School of Annals and the Ways of Writing History" by Smbat Hovhannisyan is an attempt to comprehend new methodologies of history in the Armenian environment. The work refers to the exposition of the history and logic of the Annales school, which plays an important role in the Western historiography. The placement of the Chronicle School in the Armenian humanitarian thought is an important event since it is a platform for bringing Armenian history out of the crisis and comprehending it in a new way. The book begins with a definition of the crisis of history, which is the result of eventful history. The historiographic crisis means that historical essays repeat each other and do not meet the existing cognitive requirements.

The main reason for the historiographic crisis of the late 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> centuries was that the factual basis of the study was the same and limited archival materials and the essays based on them lost sight of the representation of the environment that provided the events. The positive historiography was such, and in order to overcome it the narrativist historiography, the archaeological methodology of Foucault and other currents, and the chronologically earlier school of annals, the birth of which



позитивистская историография, нарративистская историография, археологическая методология Фуко и другие течения.

Началом возникновения Школы Анналов считается 1929 г., когда вышел первый номер журнала «Анналы экономической и социальной истории». В книге представлены теории трех поколений Школы Анналов и взаимоотношения между ними.

## REFERENCES

1. **Blok M.**, Patmut'yan pashpanakan, kam patnabani arhestë, t'argm.` Shushan Makaryan, Yer., "Sargis Khach'ents' • P'rint'info • Antares", 2018 (**In Armenian**).
2. **Domanska Ye.**, Harts'azruys' Heydën Uayti' het, t'argm.` D. Mosinyani, "KAM", Yer., 2021, N 9 (**In Armenian**).
3. **Fuko M.**, Gitelik'i hnagitut'yunë, t'argm.` N. Karoyan, Yer., "Zangak", 2022 (**In Armenian**).
4. **Hovhannisyan S.**, Annalneri dprotsë yev patmut'yan grut'yan kerperë, Yer., "Sargis Khach'ents' • P'rint'info", 2022 (**In Armenian**).
5. **T'umanyan H.**, Hayots' patmut'yun, "Yerkeri liakatar zhoghovatsu", hat. 6, Yer., 1994 (**In Armenian**).
6. **Zarean K.**, Ants'ordë yev ir ch'amban, Yer., "Sargis Khach'ents' • P'rint'info", 2010 (**In Armenian**).